ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

Հավելված 1
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն
ՓԲԸ-ի տնօրենի
«01». 06. 2026թ. -ի № 100 հրամանի

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԿԱՅՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն, հանդիսանալով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն, կարևորում է իր պացիենտների, կայքի այցելուների և օգտատերերի անձնական տվյալների, այդ թվում՝ բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը:

Սույն գաղտնիության քաղաքականությունը սահմանում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի պաշտոնական կայքի՝ sgl.am-ի միջոցով հավաքագրվող անձնական տվյալների մշակման, օգտագործման, պահպանման, փոխանցման և պաշտպանության հիմնական կանոնները:

Սույն քաղաքականությունը մշակվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի և կիրառելի այլ իրավական ակտերի պահանջները:

Բժշկական կենտրոնը անձնական տվյալների մշակման ընթացքում առաջնորդվում է օրինականության, նպատակայինության, համաչափության, գաղտնիության և տվյալների պատշաճ պաշտպանության սկզբունքներով:

1. Հիմնական հասկացություններ

Սույն քաղաքականության իմաստով՝

Անձնական տվյալ է համարվում ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել տվյալ անձին:

Բժշկական գաղտնիք են համարվում պացիենտի առողջական վիճակի, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու փաստի, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման ընթացքում պարզված այլ տվյալները:

Կայք է համարվում Բժշկական կենտրոնի պաշտոնական կայքը՝ sgl.am:

Օգտատեր է համարվում Կայք այցելող, Կայքի ձևաթղթերը լրացնող, առցանց խորհրդատվության համար գրանցվող կամ Կայքի այլ գործառույթներից օգտվող անձը:

2. Ինչպես ենք հավաքագրում անձնական տվյալները

Կայքի միջոցով անձնական տվյալները կարող են հավաքագրվել, երբ օգտատերը՝

- բաժանորդագրվում է Կայքի նորություններին,
- լրացնում է հետադարձ կապի ձևաթուղթը,
- գրանցվում է առցանց բժշկական խորհրդատվության համար,
- Կայքի միջոցով Բժշկական կենտրոնին է փոխանցում հարցում, դիմում կամ այլ հաղորդագրություն:

Տվյալները մուտքագրվում են օգտատիրոջ կողմից կամ ձևավորվում են Կայքից օգտվելու ընթացքում՝ տեխնիկական և վերլուծական գործիքների միջոցով:

3. Ինչպիսի անձնական տվյալներ կարող են հավաքագրվել

Կայքի միջոցով Բժշկական կենտրոնը կարող է հավաքագրել և մշակել հետևյալ անձնական տվյալները.

ՀՀ քաղաքացիների դեպքում՝

- անուն,
- ազգանուն,

- հայրանուն,
- ծննդյան օր, ամիս, տարի,
- հանրային ծառայությունների համարանիշ՝ ՀԾՀ,
- կոնտակտային տվյալներ, եթե դրանք տրամադրվել են օգտատիրոջ կողմից,
- առցանց խորհրդատվության կամ հետադարձ կապի շրջանակում տրամադրված այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Ոչ ՀՀ քաղաքացիների դեպքում՝

- քաղաքացիության երկիր,
- անուն,
- ազգանուն,
- հայրանուն,
- ծննդյան օր, ամիս, տարի,
- կոնտակտային տվյալներ, եթե դրանք տրամադրվել են օգտատիրոջ կողմից,
- առցանց խորհրդատվության կամ հետադարձ կապի շրջանակում տրամադրված այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Եթե առցանց խորհրդատվության կամ բժշկական ծառայության կազմակերպման նպատակով օգտատերը տրամադրում է առողջական վիճակին վերաբերող տեղեկություններ, դրանք դիտարկվում են որպես բժշկական գաղտնիք կազմող տվյալներ և մշակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ պահանջների պահպանմամբ:

4. Անձնական տվյալների մշակման նպատակները

Բժշկական կենտրոնը Կայքի միջոցով հավաքագրված անձնական տվյալներն օգտագործում է հետևյալ նպատակներով.

- պացիենտի կամ օգտատիրոջ նույնականացում,
- առցանց բժշկական խորհրդատվության կազմակերպում,
- բժշկական օգնության և սպասարկման նախնական կազմակերպում,
- ՀՀ քաղաքացիների դեպքում անհրաժեշտ տվյալների գրանցում «ԱՐՄԵԴ» էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- բժշկական փաստաթղթավորման ապահովում,

- Բժշկական կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի վերահսկում և բարելավում,
- օրենքով սահմանված հաշվառման և փաստաթղթավորման պարտականությունների կատարում,
- օգտատիրոջ հարցումներին արագ արձագանքում և հետադարձ կապի ապահովում,
- բաժանորդագրված օգտատերերին Բժշկական կենտրոնի նորությունների, միջոցառումների կամ ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրում,
- Կայքի աշխատանքի բարելավում, տեխնիկական սպասարկում և օպտիմալացում:
- ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ դեպքերում:

Անձնական տվյալները չեն օգտագործվում այնպիսի նպատակներով, որոնք անհամատեղելի են դրանց հավաքագրման սկզբնական նպատակների հետ:

5. Վերլուծական գործիքների օգտագործում

Կայքում կարող են կիրառվել վերլուծական և տեխնիկական գործիքներ, այդ թվում՝ Google Analytics, Google Search Console և Яндекс Метрика:

Նշված գործիքները կարող են հավաքագրել Կայքից օգտվելու հետ կապված տեխնիկական և վիճակագրական տեղեկություններ, այդ թվում՝ այցելությունների քանակի, դիտված էջերի, օգտատիրոջ սարքի, դիտարկչի, մոտավոր տեղակայման, Կայքում անցկացրած ժամանակի և նմանատիպ այլ տվյալների վերաբերյալ:

Այդ տեղեկությունները օգտագործվում են Կայքի աշխատանքի բարելավման, ներկայացվող տեղեկատվության որակի բարձրացման, էջերի ինդեքսավորման և Կայքի օգտագործման վիճակագրական վերլուծության նպատակով:

6. Անձնական տվյալների պաշտպանություն և գաղտնիություն

Բժշկական կենտրոնը ձեռնարկում է անհրաժեշտ տեխնիկական, կազմակերպչական և իրավական միջոցներ՝ Կայքի միջոցով հավաքագրված անձնական տվյալների անվտանգությունը, գաղտնիությունը և ամբողջականությունը ապահովելու համար:

Բժշկական կենտրոնը սահմանափակում է անձնական և բժշկական գաղտնիք կազմող տվյալներին հասանելիությունը՝ այն տրամադրելով միայն այն աշխատակիցներին կամ լիազորված անձանց, որոնց համար այդ տվյալների հասանելիությունն անհրաժեշտ է իրենց աշխատանքային կամ պայմանագրային պարտականությունների կատարման համար:

Բժշկական կենտրոնը չի վաճառում և առևտրային նպատակներով երրորդ անձանց չի տրամադրում օգտատերերի անձնական տվյալները:

Անձնական տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց միայն՝

- օգտատիրոջ կամ պացիենտի համաձայնությամբ,
- բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կամ իրականացման համար անհրաժեշտ չափով,
- Կայքի տեխնիկական սպասարկման, տեղեկատվական համակարգերի կամ վերլուծական գործիքների կիրառման շրջանակում՝ անհրաժեշտ և համաչափ ծավալով,
- օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում,
- դատարանի, իրավապահ մարմինների, վերահսկող կամ այլ իրավասու պետական մարմինների օրինական պահանջի հիման վրա:

Բժշկական գաղտնիք կազմող տվյալների փոխանցումը կատարվում է բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Կայքից օգտվելը համարվում է քաղաքականությանը ծանոթանալու և դրա պայմաններն ընդունելու հաստատում՝ կիրառելի մասով:

7. Տվյալների պահպանում

Կայքի միջոցով հավաքագրված անձնական տվյալները պահպանվում են այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է դրանց մշակման նպատակների իրականացման, Բժշկական կենտրոնի իրավական պարտականությունների կատարման, բժշկական փաստաթղթավորման, հաշվառման, արխիվացման կամ հնարավոր իրավական պահանջների պաշտպանության համար:

Բժշկական փաստաթղթերում ներառված և բժշկական գաղտնիք կազմող տվյալները պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներով:

Տվյալների պահպանման անհրաժեշտության վերացման դեպքում դրանք ջնջվում, ապանձնավորվում կամ արխիվացվում են օրենքով սահմանված կարգով:

8. Օգտատերերի իրավունքները

Օգտատերը, որպես անձնական տվյալների սուբյեկտ, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝

- տեղեկանալ իր անձնական տվյալների մշակման մասին,
- պահանջել տեղեկություններ մշակվող անձնական տվյալների, դրանց մշակման նպատակների և հիմքերի վերաբերյալ,
- պահանջել իր ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական տվյալների ուղղում կամ լրացում,
- պահանջել ապօրինի մշակվող կամ այլևս իրավական հիմք չունեցող տվյալների ջնջում կամ մշակման դադարեցում,
- հետ վերցնել իր համաձայնությունը, եթե տվյալների մշակումը իրականացվում է համաձայնության հիման վրա,
- բողոքարկել անձնական տվյալների մշակման հետ կապված գործողությունները կամ անգործությունը օրենքով սահմանված կարգով:

Նշված իրավունքները կարող են սահմանափակվել այն դեպքերում, երբ տվյալների պահպանումը կամ մշակումը պարտադիր է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ բժշկական փաստաթղթավորման, հաշվառման, արխիվացման կամ իրավական պարտավորությունների կատարման նպատակով:

9. Գաղտնիության քաղաքականության փոփոխություններ

Բժշկական կենտրոնն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ փոփոխել սույն գաղտնիության քաղաքականությունը:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում Կայքում հրապարակվելու պահից, եթե այլ ժամկետ նախատեսված չէ հրապարակված տարբերակում:

Օգտատերերին խորհուրդ է տրվում պարբերաբար այցելել այս էջ՝ գաղտնիության քաղաքականության գործող խմբագրությանը ծանոթանալու համար:

Կայքից շարունակական օգտվելը համարվում է փոփոխված քաղաքականությանը ծանոթանալու և դրա պայմաններն ընդունելու հաստատում՝ կիրառելի մասով:

10. Հետադարձ կապ

Սույն գաղտնիության քաղաքականության, անձնական տվյալների մշակման կամ տվյալների պաշտպանության հետ կապված հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել Բժշկական կենտրոնի հետ Կայքում նշված կապի միջոցներով: